ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6-1

ք. Մեղրի «01» փետրվարի 2021 թ.

« Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն »ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

ողը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1514204/մեկ միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար երկու հարյուր չորս/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

նորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ան արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ	" Նատալի ֆարմ" ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի , Գործարարների 42	ՀՀ ք .Երևան,Օհանովի 15/1
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ	Բանկ " Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 16099-003354200	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 01222567
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru	Էլ.փոստ natalipharm@bk.ru
Հեռ. 0286-60687	Հեռ. 010-744212
Տնօրեն / / Լ. Վարդանյան	Գլխ. տնօրեն՝ / / Ա.Ասատրյան
Կ.S.	Կ.S.

Հավելված

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ Ն ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/6-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԿՆՔՎԱԾ 01.02.2021թ. <<ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ>> ՍՊԸ

Ապրանքի տեխնիկական բնութագիրը և գնման ժամանակացույցը

Նախատեսվում է գնել 2021 թվականի ընթացքում

Հ	չ/հ	ԳՄԱ դասակարգման կոդը (CPV)	Առևտրային անվանումը	Ծագման երկիրը	չ/մ	միավոր գինը	քանակը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	տեխնիկական բնութագիրը
	1	33191520	Ներարկման համակարգ ֆիլտրով	Էնջիպլաստ	հատ	49,98	6200	309876	Հեղուկների ներարկման համար:Երկարությունը 150սմ ±20:
2	6	33141144	Ասեղ 22G	Եվրոմեդ	հատ	6,2	1500	9300	Ասեղ՝ստերիլ, մեկանգամյա օգտագործման, չժանգոտվող մետաղից 22G: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
3	7	33141144	Ասեղ 23G	Եվրոմեդ	հատ	6,2	500	3100	Ասեղ՝ստերիլ, մեկանգամյա օգտագործման, չժանգոտվող մետաղից 23G: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
4	15	33141100	Բախիլներ	Վոլգա Մեդիքեար	զույգ	9,98	1500	14970	Բախիլներ պոլիէթիլենային, միանգամյա օգտագործման:
5	17	33141211	Բամբակ 100գ փաթ.	Սիգմա Մեդիքեար	հատ	180,55	300	54165	Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար: Մեկ տուփում պարունակող բամբակի ծավալը 100գր: Պահպանման պայմանների ապահովվում:
6	18	33141211	Բամբակ 50գ փաթ.	Սիգմա Մեդիքեար	հատ	92	200	18400	Բամբակ ոչ ստերիլ, սպիտակ, նախատեսված բժշկական նպատակների համար: Մեկ տուփում պարունակող բամբակի ծավալը 50գր: Պահպանման պայմանների ապահովվում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
7	19	33141110	Վիրակապ 5մ x10սմ	Նատալի Ֆարմ	հատ	54	2000	108000	Բինտ՝ ոչ ստերիլ: Չափսերը 5մx10սմ:

	20	33141110	Վիրակապ 7մ x14սմ	Նատալի Ֆարմ	հատ	102	2500	255000	Բինտ՝ ոչ ստերիլ: Չափերը 7մx14սմ պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն
9	21	33141100	Բերետ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	15,75	1500	23625	Բժշկական գլխարկներ մեկանգամյա օգտագործման՝ ոչ կտորային պոլիպրոպիլենից, վիրաբուժական, հիպոալերգիկ: Գլխարկի եզրերը հավաքված են ռեզինով:
10	23	33141160	Գել սոնոգրաֆի 250գ ֆլակոն	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	2հ2	279,51	120	33541,2	Սոնոգրաֆիայի գել (ուլտրաձայնային գել): Մեկ տարայում պարունակող գելի ծավալը 250մլ: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
11	25	33131340	Գինեկոլոգիական հայելի	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	98	500	49000	Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
12	26	33141185	Գիպս մեծ 20սմx3մ	Եվրոմեդ	հատ	287	250	71750	Բինտ գիպսե: Չափերը՝ 3մx20սմ : :
13	27	33141129	Դիմակ բժ.դեմքի ռեզինով 3-2երտ12,5x50	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	20	6000	120000	Դիմակ մեկ անգամյա օգտագործման՝ ռեզինե կապիչներով եռաշերտ 12.5x50չափսից ոչ պակաս, վիրաբուժական, հիպոալերգիկ:
14	35	33141136	Թիթեռնիկ - ասեղ G23	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	23,4	1800	42120	Կատետր թիթեռնիկ Luer Lock տեսակի: Ասեղ G23 : Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
15	46	33141183	Ինտուբացիոն խողովակ մանժետով # 7,5	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	242	100	24200	Կատետր ասպիրացիոն: Չափերը՝ 7,5 : Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
16	52	33141136	Կաթետեր երակային Ջ-20 (վարդագույն)	Էնջիպլաստ Փրիվատ Լիմիթեդ	հատ	58	500	29000	Կատետր երակային : Ասեղ 20G : Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 32մմ, Հոսքի ուժգնությունը ոչ պակաս 60մլ/ր: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:

17	53	33141136	Կաթետեր երակային Ջ -22 (երկնագույն)	Էնջիպլաստ Փրիվատ Լիմիթեդ	հատ	58	2000	116000	Կատետեր երակային : Ասեղ 22G : Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 25մմ, Հոսքի ուժգնությունը ոչ պակաս 35մլ/ր: : Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
18	54	33141136	Կաթետեր երակային Ջ-24 (դեղին)	Էնջիպլաստ Փրիվատ Լիմիթեդ	հատ	68	1000	68000	Կատետեր երակային : Ասեղ 24G : Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ,երկարությունը ոչ պակաս քան 19մմ, Հոսքի ուժգնությունը ոչ պակաս 21մլ/ր: : Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
19	55	33141137	Կաթետեր միզային երկճյուղ 8Fr	Չինաստան	հատ	207	10	2070	Կատետեր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափսերը՝ 8Fr: Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
20	56	33141137	Կաթետեր միզային երկճյուղ 10Fr	Չինաստան	հատ	207	10	2070	Կատետեր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափսերը՝ 10Fr: Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
21	57	33141137	Կաթետեր միզային երկճյուղ 14fr	Չինաստան	հատ	207	50	10350	Կատետեր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափսերը՝ 14Fr: Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:

22	58	33141137	Կաթետր միզային երկճյուղ 16Fr	Չինաստան	հատ	207	50	10350	Կատետր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոն ռեզինե ծածկույթով: Չափերը՝ 16Fr: Ունի բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
23	59	33141137	Կաթետր միզային երկճյուղ 18Fr	Չինաստան	հատ	207	50	10350	Կատետր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափերը՝ 18Fr: Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
24	60	33141137	Կաթետր միզային երկճյուղ 20Fr	Եվրոմեդ	հատ	207	20	4140	Կատետր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափերը՝ 20Fr: Ունի Ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
25	70	33121180	Ճնշաչափ մեծ մանժետով պրոֆեսիոնալ	Չինաստան	հատ	4160,9	30	124827	Տոնոմետր Ադյոտոր կամ համարժեք մեխանիկական ֆանենդասկոպով: Ձեռքի մանժետը՝ մեծահասակների : Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»:
Ընդամենը մեկ միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար երկու հարյուր չորս դրամ								1514204	

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30ը:

Ծանոթություն

Նշված քանակը առավելագույնն է: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանն «պահել չոր տեղում»:

Ապրանքը մատակարարվում է վաճառողի կողմից ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարարների 42 հասցեով, գնորդի կողմից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Մատակարարման ժամանակի հաշվարկը կարող է իրականացվել ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ

ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42

Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ

Հ/Հ 16099-003354200

ՀՎՀՀ 09705024

Էլ.փոստ agarak-hosp@mail.ru

Հեռ. 0286-60687

Տնօրեն՝ / Լ. Վարդանյան

ԿՏ

ՎԱՃԱՌՈՂ՝

" Նատալի ֆարմ" ՍՊԸ

ՀՀ ք .Երևան,Օհանովի 15/1

Բանկ " Ամերիաբանկ" ՓԲԸ

Հ/Հ 1570005065330100

ՀՎՀՀ 01222567

Էլ.փոստ natalipharm@bk.ru

Հեռ. 010-744212

Գլխ. Տնօրեն՝ / Ա.Ասատրյան

ԿՏ

01222567 «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» "НАТАЛИ ФАРМ" "NATALI FARM"